



ՎԵՀԱՓԱՌ ԼԱՅՐԱՊԵՏԸ ԱՆԳԼԻԱՅՈՒՄ

ՎԵՀԱՓԱՌ ԼԱՅՐԱՊԵՏԸ ԺԱՄԱՆՈՒՄ Է ԼՈՆԴՈՆ

Հոկտեմբերի 7-ին, երկուշաբթի, երեկոյան ժամը 9-ին, Վեհափառ Հայրապետը, խաղաղ և հանգիստ թռիչքից հետո, օդային ճանապարհով ժամանում է Լոնդոն, իր շքախմբով։ Նորին Ս. Օծությանը դիմավորելու համար Լոնդոնի օդանավակայանն էին փութացել Անգլիայի հայոց հայրապետական պատվիրակ գերաշնորհ Տ. Պսակ եպիսկոպոս Թումայանը, Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգների Կալիֆոռնիայի թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Թորգոմ եպիսկոպոսը՝ ընկերացուցվամբ պր. Զան Քյուրքճյանի, Քենտրբերիի Արքեպիսկոպոսի ներկայացուցիչ գերաշնորհ Տ. Կրասկ եպիսկոպոսը և կանոնիկոս Ջոն Սետտուեյտը, Հ. Դեյվիտը, Ուեստմինստրի կաթոլիկ արքեպիսկոպոսի ներկայացուցիչ Հ. Տ. Ֆիլկհիմսոնը, հոգեշնորհ Տ. Մեսրոպ, Տ. Ներսես, Տ. Արիս, Տ. Լեոն, Տ. Տաթև, Տ. Վազգեն վարդապետները, Տ. Վազգեն արեղան, Լոնդոնի հայոց Ս. Սարգիս եկեղեցու համայնական խորհրդի, Աբգարյան և Ս. Էջմիածնի հիմնադրամի վարչության անդամները բազմաթիվ անհատ ազգայիններ։

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին դիմավորելու էին եկել նաև Լոնդոնի սովետական դեսպանատան աշխատակիցներ։

Այս Վեհափառ Հայրապետը առաջնորդվում է Լոնդոնի հայոց Ս. Սարգիս եկեղեցին, ուր մուտք է գործում «Հրաշափառ»-ով։

Հայրապետական պատվիրակ գերաշնորհ Տ. Պսակ սրբազանը բարի գալուստ է մաղթում Վեհափառ Հայրապետին։ Նորին Ս. Օծությունը, օրհնելով բոլոր ներկաներին, տալիս է իր պատգամը։

Արարողության ավարտից հետո, Վեհափառ Հայրապետն առաջնորդվում է Ս. Սարգիս եկեղեցուն առընթեր հյուրասրահ՝ հանգրստանալու։

Հոկտեմբերի 8-ին, երեքշաբթի, առավոտյան ժամերին, Վեհափառ Հայրապետը, առաջնորդարանում, ընդունում է Լոնդոնի քրիստոնեական եկեղեցիների ներկայացուցիչների այցելությունը։

Ժամը 1-ին, Կենդինգտոն պալատ հոթելում, պր. Հայկ Գալստյանը, Վեհափառ Հայրապետի բարձր պատվին, կազմակերպում է ընդունելություն, որն անցնում է ջերմ մթնոլորտում։

Ժամը 4-ին, Վեհափառ Հայրապետը բարեհաճում է ընդունել Լոնդոնում գտնվող հայ վարդապետների խումբը և զրուցել նրանց հետ կրթական և եկեղեցական հարցերի շուրջ։

Ավելի ուշ Վեհափառ Հայրապետն ընդունում է «Թալմա» թերթի հատուկ թղթակցին և հարցազրույցի ժամանակ պատասխանում է նրա հարցերին։

«Թալմա» թերթը հաջորդ օրը, հոկտեմբերի 9-ի իր համարում, աճյալ եկեղեցու տիրական Պետրը խորագրի տակ իր թղթակցի հոգևածում գրում էր։

«Բացի ընդունելությանց վարժ արարողապետներեն՝ պետք է ըլլա շփոթանքի և վարանումի պահ մը բոլոր անոնց համար, որոնք կդիմավորեն կրօնապետ մը: Բայց նորին Ս. Օծովյուն վազգեն Ա-ը, Կաթողիկոս Ամենայն Հայոց, որ երեկ սկսավ Մեծն Բրիտանիո տված իր յոթնօրյա այցելությունը, ձեռքի ամուր սեղմումով մը անմիջապես հեռացուց մտքես ծնրադրություններու, վարանումներու և գետնամածություններու պատկերները:

Հայաստանի մեջ, օդը մասնավոր բան մը ունեցած ըլլալու է, որպեսզի այդ ժողովուրդը գտած ըլլա գաղտնիքը հավերժական երիտասարդության: Գերագույն Կաթողիկոսը 55 տարեկան է, բայց հակառակ ճերմակին գացող ծփուն իր մորուքին և ծավալուն սև վեղարին՝ երիտասարդական աշխույժով լի դեմքը 20 տարի պակաս ունից կոչում:

Հայ ժողովուրդը, որ առաջինը եղավ քրիստոնեությունը ընդունող, կրնա հպարտ զգալ ինքզինք նման մեկը ունենալով որպես կրօնապետ և առաջնորդ: Մեկը, որ անկասկած մեծ է: Կասկած չկա, թե իր ձայնը Հայ Եկեղեցիին ձայնն է: Անորոշություններ չկան իր պատասխաններու մեջ, և հեղինակավոր են իր խոսքերը: Վազգեն Ա առաջնորդելու և ղեկավարելու ձևին մեջ ի հայտ կբերեն այն միևնույն կերպը, որմն առաջնորդվեցավ և ուղենշեց Հովհաննես ԺԳ պապը: Ո՛չ վարչական ուժով, և ոչ իսկ մտավորական բարձրությամբ: Կաթողիկոսը այնպիսի մեկն է, որ կրնա հարմարիլ ամեն տեղի. Լոնդոնի համեստ երիցատան մեջ, թե էջմիածնի իր փարթավ սրբավայրին, որ կգտնվի Սովետ Ռուսիո գիրկը, ուրկն կհոգնվի իր 2,5 միլիոննոց հոտը և շատ ու շատ ուրիշներ, հազարավոր մղոններ հեռուն:

Վազգեն Ա-ը այն մարդոցմե չէ, որ կարելի ըլլա բաղդատել ջեք օդանավերուն հետ, բայց նույնքան ընտելացած է արագ ճամբորդության հետ, որքան մեծ քաղաքագետները: Ասիկա իր շորորոգ մեծ ճամբորդությունն է Հայաստանն դուրս 1956-են ի վեր, երբ առաջին անգամ այցելեց Անգլիա:

Երիցատան պզտիկ հյուրասրահը սերտորեն կներդաշնակվի Վեհափառ մեծ Կաթողիկոսին մեր կրած տպավորություններուն հետ: Հայ՝ մինչև եղունգին ծայրը, Հայաստանն եկած գրական զանազան գիրքերուն հետ կգտնվին նաև բանաստեղծական գրքեր Լուգվեյլյուն, Ռոբերտ Յոսստեն, Զոն Ռեսքինի կյանքը և այլևայլ ընտիր ուսումնասիրություններ Զ. Ք. Զեստերտոնեն, շոտլանդի Վալդեմար Ժամը: Հայտ պարկի մեջ» և Ս. Օգոստինոսի խոստովանանքը: Կա նաև Բա-

խի կիսանդրին, որ անմիջական մոտիկն է շատ գեղեցիկ արևելյան սուրճի կազմածի մը, ինչպես նաև շրջանակի մեջ առնված թագուհին թագադրության հրավիրագիրը և դիմանկարներ՝ Հայ Եկեղեցվո պետներու:

Վազգեն Ա կհայտնե, թե ինք Անգլիա չէ եկած մասնավոր նպատակով մը, այլ պարզապես էջմիածնեն Երուսաղեմ իր ճամբուն վրա որպես բնական հանգրվան մը: Կաթողիկոսը ունեցած է շատ բարեկամական հարակոթություններ, ըլլա՝ Անգլիկան Եկեղեցիին, բերություններ, ըլլա՝ Անգլիկան Եկեղեցիին, ըլլա Պապական Եկեղեցիին հետ, որոնց ներկայացուցիչները օդանավակայան եկան դիմավորելու զինք:

Այսուհանդերձ ինք շատ զգույշ է հանգեալ Տիեզերական ժողովին: Ու թեև երկու հոգի ղրկած է Հռոմ որպես դիտող, բայց պիտի նախընտրեն սպասել, մինչև որ Վատիկանի ժողովը վերջացնեն իր աշխատանքները և ապա միայն արտահայտվի:

Ընդհանուր առմամբ, Կաթողիկոսը փափագող մըն է եկեղեցիներու միության, բայց ոչ մինչև վարչականը: Հին, պատմական եկեղեցիները պետք է հետևին իրենց ավանդություններուն և մնան ինքնագլուխ (ավտոկեֆալ):

Ինչպես կպարզվի Վազգեն Ա-ի հայտարարություններեն, Հայ Եկեղեցվո հարաբերությունները լավ են կառավարության հետ: Որպես Ամենայն Հայոց Կաթողիկոս՝ 8 տարին ի վեր բարի տրամադրություններ միայն տեսած է կառավարութենեն, ու թեև կրոնքի ուսուցումը արտոնված չէ դպրոցներուն մեջ, բայց կարելի է քարոզել տուններուն և եկեղեցիներուն մեջ: Պայմանները շատ բարեփոխված են Ստալինի մահեն ի վեր: Հին եկեղեցիները վերանորոգելու արտոնած են և հավատացյալներուն թիվը սկսած է շատնալ: Այս տարի, Համբարձման տոնին առթիվ, շատ ավելի հավատացյալներ կային էջմիածնի Մայր Տաճարին մեջ, քան անցյալին:

Վեհափառին գնահատումով՝ ժողովուրդին կեսը հավատացյալ է և 80 առ հարյուրը մը կրթոված են: Վերջերս էջմիածինը ունեցավ իր տպարանը, ուր կրնա կրօնական գրքեր տպագրել: Այսօր Վեհափառը Լամբեթ Պալատի անպաշտոն այցելությամբ պիտի հանդիպի, առաջին անգամ, դոկտ. Ռեմզիին և շաքաթ օր պիտի շարունակեն իր այցելությունը. դեպի Երուսաղեմ, ուր խորհրդակցություն ունի այլ կրօնապետներու հետ, Ս. Հարություն Տաճարին վերանորոգության շուրջ:

Երեկոյան ժամը 8-ին, Վեհափառ Հայրապետը բարեհաճում է իր օրհնաբեր ներկայությունը պատվել պր. Ա. Մուրաֆյանի բնակարանը և օրհնել նրա սեղանի աղն ու հացը:



Ամենայն Հայոց Հայրապետը Քենտրերիի Արքեպիսկոպոսի հետ Լաբենթի պալատում

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԼԱՄԲԵՐԻ ՊԱԼԱՏՈՒՄ

Հոկտեմբերի 9-ին, չորեքշաբթի, Լոնդոն է ժամանում Ամերիկայի Միացյալ Նահանգների արևելյան թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Սիրոն արքեպիսկոպոս Մանուկյանը, միանալու Վեհափառ Հայրապետի շքախմբին, ճրուսադեմ մեկնելու համար:

Երեկոյան ժամը 7.15-ին, Լամբերի պալատում, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի բարձր պատվին, Քենտրբերիի և Համայն Անգլիայի Արքեպիսկոպոս, Նորին Սրբություն դոկտ. Մայքլ Ռեմդին կազմակերպում է ընդունելություն:

Ընդունելության հրավիրվում են նաև գերաշնորհ Տ. Սիրոն, Տ. Հայկազուն, Տ. Պաակ, Տ. Թորգոմ սրբազանները, Լոնդոնում գտնվող հայ վարդապետները և հայ համայնքի ներկայացուցիչներ:

Պալատի մուտքի առաջ, Քենտրբերիի Արքեպիսկոպոսը, զգեստավորված, իր շքախմբով դիմավորում է Հայոց Հայրապետին: Եկեղեցական երկու Պետերը ողջագուրվում են քրիստոնեական սիրո համբույրով: Այնուհետև Հայոց Հայրապետը և Քենտրբերիի Արքեպիսկոպոսը եկեղեցական թափոփում առաջնորդվում են Լամբերի պալատի մատուղի:

Այստեղ, Լամբերի պալատի մատուղան մեջ, տեղի է ունենում մասնավոր և հանդիսավոր արարողություն:

Հանդիսությունն սկսվում է Ճիթ սաղմոսի երգեցողությամբ: Այնուհետև ընթերցվում է Մատթեոսի Ավետարանի Ե գլխի 1—12 համարները: Խմբովին արտասանված «Հայր մեր»-ից և Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի օրհնաբեր այցելության նվիրված մասնավոր աղոթքից հետո, Քենտրբերիի Արքեպիսկոպոսը Նորին Ս. Օծությունն առաջնորդում է խորան և հրավիրում տալու իր օրհնությունները:

Արարողության ավարտին Քենտրբերիի Արքեպիսկոպոսը, ողջունելով Հայոց Հայրապետին, ասում է.

«Մեծ հանույժով կողջունեմ Ձերդ Ս. Օծություն Ամենայն Հայոց Կաթողիկոսիդ, այստեղ իմ տան՝ Լամբերի մեջ: Մասնավորաբար ուրախ եմ, որ Ձերդ Ս. Օծությունը կրցավ այս այցելությունը կատարել Ս. Մեսրոպի ծննդյան 1600-ամյակի տոնակատարութենեն ոչ այնքան ուշ, երբ ես անիքը ունեցա ներկա ըլլալու սուրբ պատարագին Լոնդոնի Ս. Սարգիս եկեղեցիին մեջ:

Մենք միշտ մասնավոր հպարտությամբ կնայինք Հայաստանի Բրիտանյաններուն, որովհետև դուք առաջինն էիք, որ ազգովին ընդունեցիք Բրիտանյանական հավատքը և մար-

տիրոսներու մեծ քիվ մը ավելցուցիք Բրիտանյա վկաներու ազնվական բանակին: Կիսափագիմ, որ Ձերդ Ս. Օծությունը գիտնա, քեռքան բանկագին կհամարենք բարեկամությունը Լոնդոնի հայ համայնքին, որ կգտնվի Ձեր սիրելի Պաակ եպիսկոպոս Թուսայանի առաջնորդության տակ: Աշխարհի վրա ուր որ հայ Բրիտանյաններ կան, անոնք կընան զարկ տալ ուրիշ Բրիտանյաններու հետ եղբայրական հարաբերությանց, ինչ որ նույնիմե մեր Տիրոջ նպատակներուն այնքան մոտիկ կեցվածք մըն է:

Որովհետև Ձերդ Ս. Օծությունը Պետն է ամբողջ աշխարհի հայ Բրիտանյաններուն, կխնդրեմ, որ բնդունիք այս նվերը (Լամբերի խաչը)՝ ի նշան այն բարձր համարումին, զոր անգլիկաններս միշտ ունեցած ենք Հայ Եկեղեցվո հանդեպ:

Կաղաքենք, որ Ձերդ Ս. Օծության այս այցելությունը փութացնե մեր Տիրոջ մարգարեությունը. «Եւ եկեցեմ յարեկից և յարեմից... և բազմեցին յարայութեան Աստուծոյ»:

Հիմա կխնդրեմ, որ ամենուս տաք Ձեր օրհնությունը:

Ամենայն Հայոց Հայրապետը, իր օրհնությունը տալուց առաջ, ուրախություն է հայտնում, որ ինքը երկրորդ անգամ է գտնվում Լոնդոնում և իր սրտում դեռ վառ են առաջին այցելության տպավորությունները: Այնուհետև Նորին Ս. Օծությունը շնորհակալություն է հայտնում Քենտրբերիի Արքեպիսկոպոսին եղբայրական ջերմ ընդունելության և Լամբերի խաչով պարգևատրման համար:

«Լամբերի խաչը, — ասում է հայոց Հայրապետը, — որով զարդարեցիք Հայոց Կաթողիկոսի կուռժքը, համարում ենք Անգլիկան Եկեղեցու եղբայրական սիրտ վառ արտահայտությունը Հայաստանյայց եկեղեցու հանդեպ»:

Ամենայն Հայոց Հայրապետը, Լամբերի պալատ իր այցելության առթիվ, Քենտրբերիի Արքեպիսկոպոսին նվիրում է Հայկական ոճով պատրաստված արծաթյա մի խաչ, — «Իրեւ նշան մեր եղբայրական փոխադարձ սիրուն և Բրիտանյանական զգացումներուն», — եղբայրացնում է Հայոց Հայրապետը:

Ապա Նորին Ս. Օծությունը տալիս է իր օրհնությունը:

Այնուհետև Քենտրբերիի Արքեպիսկոպոսը և Ամենայն Հայոց Հայրապետը իրենց շքախմբերով, եկեղեցական թափոփում, առաջնորդվում են Լամբերի պալատի ընդունելության դահլիճը, ուր Քենտրբերիի Արքեպիսկոպոսը Հայոց Հայրապետի պատվին կազմակերպում է ընդունելություն, որն անցնում է ջերմ և սիրալիք մթնոլորտում, անմոռանալի մի էջ եւս ավելացնելով Հայ և Անգլիկան



ՆՈՐԻՆ ԳԵՐԱՇՆՈՐՀՈՒԹՅՈՒՆ ԴՈԿՏ. ՄԱՅԲԼ ՌԱՄԶԻ
ԱՐԹԵՊԻՍԿՈՊՈՍ ԲԵՆՏԵՐԲԵՐԻԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ԱՆԳԼԻՈ



Ամստերդամի հայոց եկեղեցին (ԺՀ դարի նկար, նկեր Վեռախա Հայրապետին, Լոտրնում բնակվող Ա. Մուրաջյանից)

եկեղեցիների հարաբերությունների պատմության մեջ:

Բելուսում հրատարակվող «Նաիրի» շաբաթաթերթը, իր հոկտեմբեր 20 թվակիր «Լույսի մարդը» խմբագրականում, անդրադառնալով Վեհափառ Հայրապետի լոնդոն կատարած ուղևորության օտարների վրա թողած տպավորության և «Լոնդոն Թայմս» թերթի թղթակցի հուշերին, գրում է.

«Բոլոր անոնք, որ բախտը կունենան մոտեն տեսնելու Վազգեն Վեհափառին դեմքը, առանց բացառության կհամակվին խաղաղության, բարության և վստահության խառնուրդ այն հուզումով, որ առավոտին մաքուր լույսը կարթնցնեն հոգիին մեջ:

«Լուսավոր դեմք մը»,—հա՛կարճ և խիտ այն խոսքը, որով մարդիկ կամփոփեն իրենց տպավորությունը, հայ թե օտար, Վեհափառին մասին: Իր անձը՝ հոգեկան և ֆիզիկական հազվագեղ ներդաշնակության մը շնորհն ունի, ու զարմանալու չէ որ օտարները—մասնավա՛րդ օտարները—համիշտակության պահ մը կունենան, և մոռնալով կրոնապետը, մտածումով կերթան դեպի այն երկիրն ու ժողովուրդը, Արևելքի խառնարանին ու խորհուրդներուն մեջ հաճախ մոռցված այն ցեղը, որուն հետ այսպես անակնկալ հանդիպում մը, հանձին ընտրելագույն իր մեկ նմուշին, կմատեն գիրենք հիացումի շփոթանքին:

«Լուսավոր դեմք մը»,—ու կարդացե՛ք քիչ անդին, անգլիական մամուլին և ամբողջ աշխարհի մամուլին ամենին լուրջ և հեղինակավոր թերթին՝ «Թայմս»-ի խոսքը: Թերթ մը, որ իր բառերը տասն անգամ կշռելով կտպեն և իր գնահատումներուն մեջ այնքան ժլատ ու դժվարահաճ ըլլալու սոսկալի համբավ մը կվայելն, շրջանակի մատնված գրիչով մըն է, որ կարտահայտվի, և Վազգեն Վեհափառին մեջ կոլոննե կարծեք նո՛ր գտնված հայություն մը և Հայաստան մը:

«Լուսավոր դեմք մը»,—և, անկասկած լույսի պես ճերմակ հոգի մը, ու նաև պայծառ իմացականություն մը, վճիտ՝ իր խոսքով, և խոսքը՝ գաղափարներուն հստակությամբը զորեղ: Բախտավորություն մըն է, նախախնամական բարիք մը հայ ժողովուրդին համար, իր պատմության բախտորոշ այս շրջանին, որպես ազգային գերագույն խորհրդանիշ ունենալ նման կրոնապետ մը, որ խոհուն իր գործելակերպով և անբասիր նկարագրով կկազմեն միացման կապը, աշխարհագրական և գաղափարական անըրպատներով կտպած հայության միջև:

Հոկտեմբերի 10-ին, հիեզաբքի, առավոտյան ժամերին, Վեհափառ Հայրապետը առաջնորդարանում ընդունում է այցելությունները Լոնդոնի հայ համայնքի ներկայացուցիչների,

կազմակերպությունների և առանձին անհատներին:

Ժամը 12.30-ին, Դորչեստեր հյուրանոցում, Հրանտ և Լևոն Ապաճյան եղբայրները, Վեհափառ Հայրապետի բարձր պատվին, կազմակերպում են ընդունելություն, որն անցնում է սրտագին մթնոլորտում:

Հետմիջօրեի ժամը 4-ին, Վեհափառ Հայրապետը այցելում է Լոնդոնի սովետական դեսպանատունը, ուր ընդունվում է ջերմորեն:

Երեկոյան ժամը 8-ին, Քենդինգտոն պալատի հոթելի սրահում, տեղի է ունենում «Էջմիածին» կինոնկարի ցուցադրումը: Ֆիլմի ցուցադրումից առաջ, Վեհափառ Հայրապետը հանդես է գալիս «Ս. Էջմիածինը այսօր և մեր եկեղեցական կյանքը» նյութի շուրջ շահեկան բանախոսությամբ, որ լսվում է լարված հետաքրքրությամբ:

Հոկտեմբերի 11-ին, ուրբաթ, ժամը 12-ին, Քենդինգտոն պալատի հոթելի սրահում, Լոնդոնի համայնքային վարչությունը, Վեհափառ Հայրապետի պատվին, կազմակերպում է հրաժեշտի ընդունելություն, որի ընթացքում նորին Ս. Օծուխյան ներկայությունը ողջունում են Ս. Սիմոն, Ս. Հայկազուն արքեպիսկոպոսները, Ս. Պապկ և Ս. Թորգոմ եպիսկոպոսները, Լոնդոնի հայ համայնքի անունից պր. Ե. Բենյամին, ճարտարապետ Մ. Մազմանյանը և ուրիշներ:

Վերջում խոսք է առնում Վեհափառ Հայրապետը, շեշտում է Հայ և Անգլիկան եկեղեցիների համագործակցության կարևորությունը և իր գոհունակությունը հայտնելով Լոնդոնի հայ համայնքի ջերմ հյուրասիրության և սրտատուլ դիմավորության համար, օրհնում է բոլոր ներկաներին:

Իր շնորհաբեր այցելության առթիվ, Վեհափառ Հայրապետը, ի նշան իր գնահատության, արքեպիսկոպոսության պատիվ է շնորհում Անգլիայի հայրապետական պատվիրակ գերաշնորհ Ս. Պապկ եպիսկոպոս Թուսայանին:

Ընդունելությունը վերջանում է Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով:

Ժամը 6-ին նորին Ս. Օծուխյունը այցելում է Լոնդոնի «Հայ տուն»-ը և ողջունելով բոլոր ներկաներին, տալիս է իր հայրապետական օրհնությունը:

Հոկտեմբերի 12-ին, շաբաթ, հետմիջօրեի ժամը 3-ին, Վեհափառ Հայրապետը հրաժեշտ է առնում Լոնդոնի հայ համայնքից, լավագույն տպավորություններով և քաղցր հուշերով, և մեկնում Ամման՝ Նորդանանի մայրաքաղաքը, Ս. Երուսաղեմ ուխտագնացության իր ճանապարհի վրա:

Վեհափառ Հայրապետին ընկերակցում են, բացի նրա մշտական շբախմբի անդամներից,



Անգլիայի հայոց հայրապետական պատվիրակ
Տ. Պսակ արքեպիսկոպոս Թումայան

Տ. Սիրուն և Տ. Թորգոմ սրբազանները և Կալիֆոռնիայի թեմական խորհրդի ատենապետ պր. Զոն Քյուրքճյանը:

Ինքնաթիռը մի ժամ Հոռմում մնալուց հետո, գիշերվա ժամը 12-ին հասնում է Հորդանանի մայրաքաղաքը՝ Ամման:

Ամենայն Հայոց Հայրապետը, Լոնդոնից մեկնելու առթիվ, Քենտրբերիի Արքեպիսկոպոսին է ուղարկում հետևյալ գրությունը.

«ՆՈՐԻՆ ԳԵՐԱՇՆՈՐՀՈՒԹՅՈՒՆ ԴՈԿՏ. ՄԱՅՐԱՆ
ՌԵՄՋԻՆ, ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԶԵՆՏՐԵՐԻԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ
ԱՆԳԼԻՈ. ԼՈՆԴՈՆ

Այսօր բաժնվելով Ձեր սփանշելի երկրեն և Ձեր մեծ քաղաքին, Մեզի համար բացառիկ ուրախություն է Ձերդ Գերաշնորհության ներկայացնել Մեր և մեր սկեղեցվո շնորհակալությունը Ձեր ցուցաբերած եղբայրական սիրուն և անկեղծ բարեկամության համար դեպի Ամենայն Հայոց Հայրապետը և դեպի Ս. Էջմիածին:

Մենք Մեր հոգեկան անփոխարինելի մխիթարությամբ պիտի հիշենք Մեր այցելությունը Լամբեթ պալատ և Ձեր պատկանելի անձնավորությունը:

Այս առթիվ հանույքն ունենք նաև Ձեզ հայտնելու, թե Մենք շնորհեցինք Մեր պատվիրակ գերաշնորհ Պսակ սրբազանին արհեստակցության պատիվ՝ ի գնահատումն իր բազմամյա եկեղեցական ծառայության և իր աստվածահանո եղանակին, նվիրված մեր երկու եկեղեցիներու բարեկամական կապերու ամրապնդման:

Թող Աստված շնորհե Ձերդ Գերաշնորհության խաղաղ և արդյունաշատ հովվապետության երկար տարիներ՝ ի ծաղկումն Ձեր մեծ սկեղեցիին և հերշանկություն Ձեր բարեպաշտ ազնիվ ժողովուրդին:

Թող Ս. Հոգին միշտ ներկա ըլլա Ձեր մտածումներուն և Ձեր գործերուն մեջ:

Նղբայրական սիրով ի Քրիստոս՝

ՎԱԶԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Լոնդոն, 12 հոկտեմբեր 1963»: